

## Ն Ո Ր Մ Ե Ր

ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԿՈՅՈՒՂԱՑԱՆՑ ՉՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՆՈՐ  
ԿԱՌՈՒՑՎՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՈՅՈՒՂԱՋՐԵՐԻ ՏԵՂԱՅԻՆ ՄԱՔՐՄԱՆ  
ԿԱՅԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԱԴՐՄԱՆ

### I. ԸՆՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն նորմերով կանոնակարգվում են կենտրոնացված կոյուղացանց չունեցող համայնքներում նոր կառուցվող օբյեկտների (բազմաբնակարան, հասարակական և արտադրական շենքեր ու շինություններ) համար կոյուղաջրերի տեղային կենսաբանական մաքրման կայանների (այսուհետ՝ մաքրման կայաններ) պարտադիր տեղադրմանը ներկայացվող պահանջները:

2. Սույն նորմերի պահանջները պարտադիր չեն անհատական բնակելի շենքերի համար՝ բացառությամբ որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ առանձնացված տարածքներում նոր կառուցվող անհատական բնակելի շենքերի:

### II. ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆՈՐՄԵՐԸ

3. Կենտրոնացված կոյուղացանց չունեցող համայնքներում նոր կառուցվող օբյեկտներում կոյուղաջրերը մաքրվում են մաքրման կայանների միջոցով:

4. Նոր կառուցվող օբյեկտների համար մաքրման կայանների տեղադրման պահանջը սահմանվում է օբյեկտի ճարտարապետահատակագծային առաջադրանքով:

5. Մաքրման կայանների հզորությունն ու քանակը որոշվում են՝ ելնելով օբյեկտի գործառնական նշանակությունից, ջրօգտագործման ծավալներից ու առանձնահատկություններից, և նախատեսվում են օբյեկտի նախագծային փաստաթղթերի կազմում:

6. Մաքրման կայանների նախագծման համար պետք է հիմք հանդիսանա դրանց ելքամասերի կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի քանակների համապատասխանությունը կեղտաջրերն ընդունող ջրային ռեսուրսների դասակարգմամբ պայմանավորված՝ ջրի որակին ներկայացվող պահանջներին:

7. Մաքրման կայանները նախագծվում են գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

8. Սեփականատերերի փոխադարձ համաձայնությամբ՝ մեկից ավելի նոր կառուցվող օբյեկտների համար կարող են նախագծվել և տեղադրվել ընդհանուր օգտագործման մաքրման կայաններ:

9. Մաքրման կայանների սանիտարական պահպանման գոտիների սահմանները որոշվում են՝ ելնելով դրանց տեխնիկական բնութագրերից:

10. Օբյեկտի նախագծային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. Մաքրման կայանները պետք է շահագործվեն դրանց տեխնիկական փաստաթղթերում ներկայացվող պահանջների համաձայն՝ հաշվի առնելով նաև լաբորատորարտադրական հսկողության տվյալները:

12. Մաքրված կեղտաջրերի լաբորատոր-արտադրական հսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

13. Մաքրման կայանի միջոցով կենսաբանական մաքրման ենթարկված արտանետումներին և թափոններին ներկայացվող օրենսդրական պահանջների ապահովման համար օբյեկտի սեփականատերը կամ օգտագործման (շահագործման) իրավունք ձեռք

բերած ֆիզիկական կամ իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ